պարսիկ գիւղացիները անսահմանօրէն աւելի ճնշուած են եւ խեղճ, քան՝ եթէ նրանք լինէին ճորտեր» (Ա. 253):

Ինչ վերաբերում է յատկապէս Պարսկաստանի հայ գիւղացիներին, նրանք պարտաւոր են եղել հունձի մինչեւ իսկ կէսը հարկ տալու, փոխանակ սովորական մէկ երրորդի: Այդ պատճառով էլ Թաւրիզի կողմերի հայերը «ռուսներին ընդունել են որպէս իրենց ազատարարներին»: Եւ երբ ռուսները պարպել են այդ հողամասերը, նոյն վայրերի հայերն էլ, լքելով իրենց տուն ու տեղը եւ հողը, հետները առնելով միայն շարժական գոյքերը եւ անասունները, մեծագոյն մասով հետեւել են ռուսներին՝ դէպի Անդրկովկաս, այնտեղ հաստատելով բնակութիւն:

Այդ ժամանակից սկսած, աւելացնում է Հաքստհաուզէն, պարսիկները այնչափ խելօքցել են, որ վերացրել են հայերի վրայ ծանրացող չափէն աւելի մեծ ճնշումները ու նրանց ամէն բանում թաթարներին հաւասարեցրել»:

* * *

Այսչափը բաւ համարելով անդրկովկասեան ժողովուրդների վիճակագրութեան մասին ընդհանրապէս եւ հայերի մասին մասնաւորապէս, 19-րդ դարի առաջին կէսում, ինչպէս նաեւ հայ ժողովրդի նկարագրի, նրա պատմական կոչման, քաղաքակրթական ձգտումների, նրա տնտեսական եւ ընկերային կեանքի, ընտանեկան կենցաղի մասին — այնպէս, ինչպէս որ նրանք ներկայացել են Հաքստհաուզէնին, գլխաւորապէս Աբովեանի տուած նիւթերի հիման վրայ, մի երրորդ եւ վերջին յօդուած էլ նուիրենք այն խնդրին, թէ հայ բնաշխարհի սիրտը՝ Երեւան, ինչպէս նաեւ հայութեան կրօնական-քաղաքակրթական դարաւոր կենտրոնը՝ Էջմիածին, տնտեսական եւ քաղաքակրթական տեսակէտից ի՛նչ պատկեր էին ներկայացնում Հաքստհաուզէնի ժամանակ: Վերջապէս Քանաֆեռի օրինակով, ուր եղել է Հաքստհաուզէն Աբովեանի առաջնորդութեամբ, մենք կը տեսնենք, թէ հայ գիւղը մեզնից 80-90 տարի առաջ ինչ էր ներկայացնում — իր կեանքի ու կենցաղի բովանդակ կողմերով: Դրանք բոլորը այնչափ հաղուագէպ, այնչափ թանկագին նիւթեր են մեր ոչ-չատ հեռաւոր անցեալի մտաւոր եւ մանաւանդ նիւթական մշակոյթը ուսումնասիրելու տեսակէտից, որ աւելորդ չեն դարձնում հանգամանօրէն ուշադրութեան առնուելու անհրաժեշտութիւնը:

ՈՒՐՖԱՅԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Գրեց՝ Գ. Ա. ՈՒՐՀԱՑԵՑԻ

Քանի մը շբեղ դրուագներ կուտէն:

Կռուի երկրորդ շաբթուն, անդամ մը Թուրքերը կը յաջողին հայ գծերը ճեղքել եւ մինչեւ Մայր-Եկեղեցին մօտենալ: Այդ ատեն Մկրտիչ դէնքերը թողած, սուսերամերկ հակայարձակում մը կը գործէ, խումբ մը տղաներով անոնց վրայ կը խոյանայ, եւ դիակներ ցանելով իր առջեւէն՝ կը քշէ զանոնք ոչխարներու երամակի մը պէս մինչեւ շուկան:

Լեղապատառ Թուրքերը կը պարպեն մերձակայ թաղերը եւ հեռուները կ'ապաստանին:

Ուրիշ նման դէպք մըն ալ տեղի կ'ունենայ Հայր Աբրահամու թաղին մէջ, ուր նեղ փողոցէ մը Թուրքերը կը յաջողին յառաջանալ եւ բաւական նեղել հանդիպակաց հայ դիրքը եւ սպաննել խմբապետներէն Մկրտիչ Ապրելեան: Այն ատեն անոր զինակիցը՝ Խոսրով Թուլուղեան, կատաղի տուիծի մը պէս, դուրս կը նետուի իր դիրքէն եւ, կուրծքը թշնամիի կրակին, կը յարձակի եւ կը քշէ զանոնք մինչեւ Հայր Աբրահամու լճակին ափը. բայց շատ մը վէրքեր ստանալով՝ դետին կ'իյնայ:

Ցիշեալը իբր «ամելէ» կը ծառայէ Գուտէյմէի մէջ, սպայի մը իբր սպասաւոր: Անզէն տղոց ջարդէն քանի մը օր առաջ, իր սպային ու�ը առնելով կը հեռանայ, եւ ճամբան հարցնողներուն կ'ըսէ, թէ իր տիրոջ նը-